ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

Ես՝ Սահակ Լավրենտի Գյուլինյանս, ՀՀ պետական վերահսկողական ծառայության (այսուհետ՝ Ծառայություն) գնումների գործընթացների վերահսկողության վարչության փորձագետ աշխատելու ժամանակահատվածում իրականացրել եմ հետևյալ աշխատանքները.

1. ՀՀ վարչապետին մշտադիտարկումների միջոցով առաջարկություններ ներկայացնելու նպատակով իրականացրել եմ ստացված տեղեկությունների, դիմումների, բողոքների, առաջարկությունների, փաստաթղթերի և հաղորդումների ուսումնասիրություն, վերլուծություն և ամփոփում: Մասնավորապես՝ ներգրավված եմ եղել ՀՀ ԿԳՄՍՆ «Գնահատման և թեստավորման կենտրոն» ՊՈԱԿ-ում մշտադիտարկում իրականացնող խմբի կազմում,
2. Ծառայության ղեկավարի հանձնարարագրի հիման վրա ներգրավված եմ եղել ուսումնասիրությունների իրականացմանը, մասնավորապես՝ «Ջրառ» ՓԲ ընկերությունում իրականացվող ուսումնասիրության շրջանակում ներգրավված եմ ուսումնասիրություն իրականացնող խմբի կազմում,
3. Իրականացրել եմ ՀՀ վարչապետի կողմից տրված հանձնարարականների կատարում, մասնավորապես՝ ներգրավված եմ եղել Ծառայության ղեկավարի 2023 թվականի օգոստոսի 31-ի N 142-Լ հրամանի հիման վրա իրականացրել եմ գնումների ընթացակարգերի ռիսկերի գնահատման նպատակով ռիսկայնությունը որոշող չափորոշիչների, դրանց կիրառմամբ ռիսկերի գնահատման մեթոդաբանությամբ ընտրանքի իրականացման, վերահսկողության ընթացքում կիրառվող առաջնահերթությունների որոշման գործընթաց, որի շրջանակում դիտարկվում է «Գնումների մասին» օրենքով պատվիրատուների կարիքների համար տեղեկագրում հրապարակված գնման ընթացակարգերի հրավերների ընթացիկ վերլուծություն և անհամապատասխանությունների արձանագրում: «Կարեն Դեմիրճյանի անվան մարզահամերգային համալիր» ՊՈԱԿ-ում «Մանկական Եվրատեսիլ 2022» երգի մրցույթի կազմակերպման աշխատանքների շրջանակում իրականացված մշտադիտարկման աշխատանքային խմբում: Միաժամանակ, պատվիրատուներին ներկայացվել է արձանագրված անհամապատասխանությունների վերաբերյալ գրավոր առաջարկություններ,
4. Իրականացրել եմ այլ ընթացիկ և չպլանավորված աշխատանքներ:

ՀՀ պետական վերահսկողական ծառայության գնումների գործընթացների վերահսկողության վարչության փորձագետ՝

Սահակ Գյուլինյան
«22 » մայիսի 2024թ.